

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն - 45

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 27-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

*ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԸ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ*

Ավագանու 15 անդամներից նիստին մասնակցում էին՝ Ա. Զաքարյանը, Ա. Խաչատրյանը, Ա. Հունանյանը, Վ. Մկրտչյանը, Վ. Մովսիսյանը, Կ. Շահազիզյանը, Հ. Վարդանյանը, Բ. Վարդանյանը, Ա. Սարգսյանը, Ս. Օվոյանը:

Նիստին մասնակցում էր նաև աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանը:

1. Հաստատվում է նիստի հետևյալ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ը

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի 2021 թվականի տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

3. Համայնքային սեփականություն հանդիսացող, որպես քաղաքացու սեփականություն փոխանցված որոշ հողամասեր համայնքային սեփականություն ճանաչելու և աճուրդվաճառքով օտարելու մասին:

/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/

4. Գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների կառուցման նպատակով հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/

5. Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/

6. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդվաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/

7. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության հողամասը ուղղակի վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/

8 - ԿՈՐՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Վ. Մկրտչյանը և Ա. Խաչատրյանը չեն մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն - 2 - Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի 2021 թվականի տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին

Հարցը զեկուցեց աշխատակազմի քարտուղար Ս. Սահակյանը և առաջարկեց ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ կետի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 7-րդ, 33-րդ, 34-րդ հոդվածների պահանջներով, Աշտարակ համայնքի 2021 թվականի տարեկան բյուջեում կատարել վերաբաշխումներ:

Զեկուցողը նշեց, որ կատարվող փոփոխությունների հիմնական նպատակը Աշտարակ համայնքի կողմից սուբվենցիոն ծրագրերի ֆինանսավորումն ապահովելն է:

9- ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Վ. Մկրտչյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն - 3 - Համայնքային սեփականություն հանդիսացող, որպես քաղաքացու սեփականություն փոխանցված որոշ հողամասեր համայնքային սեփականություն ճանաչելու և աճուրդ-վաճառքով օտարելու մասին

Հարցը ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանը և առաջարկեց համաձայնություն տալ Աշտարակ քաղաքի վարչական տարածքում գտնվող քաղաքացու սեփականություն փոխանցված որոշ հողամասեր համայնքային սեփականություն ճանաչելուն և կադաստրային արժեքի հարյուր տոկոսի չափով, աճուրդ-վաճառքով օտարելուն:

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 4 - Գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների կառուցման նպատակով հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանը և առաջարկեց, հիմք ընդունելով սեփականատեր հանդիսացող քաղաքացիների դիմումները, հավանություն տալ ներկայացված գյուղատնտեսական նշանակության հողամասերի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 5 - Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին

Հարցը ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանը և առաջարկեց, հիմք ընդունելով քաղաքացու դիմումը, հավանություն տալ Արայի տեղամասի 02-001-0684-0035 ծածկագրով 4.496հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության արոտավայրի նպատակային նշանակությունը բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 6 - Հայաստանի Հանրապետության Աշխարհակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանը և առաջարկեց համաձայնություն տալ համայնքային սեփականության որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու համայնքի ղեկավարի առաջարկությանը: Միաժամանակ առաջարկեց սահմանել մեկնարկային գին:

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 7 - Հայաստանի Հանրապետության Աշխարհակի համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության հողամասը ուղղակի վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին

Օրակարգի վերջին հարցը ևս ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանը և առաջարկեց համաձայնություն տալ համայնքային սեփականություն հանդիսացող 0.0833հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասն ուղղակի վաճառքով օտարել կից ընդլայնվող գյուղատնտեսական նշանակության հողամասի սեփականատիրոջը:

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Օրակարգի հարցերը սպառված են:

Ավագանին աշխատանքներն ավարտեց 2021 թվականի օգոստոսի 27-ին:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ

ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ

ԱՐՏԱՇԵՍ ԽԱԶԱՏՐՅԱՆ

ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ

ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՎԱՀԵ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ